«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/01

ք. Երևան «27» 12 2021թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սավ-Վաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Սերգեյ Թամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 17580000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 1.1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա Կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Սավ-Վաս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 17 փ., 27 շ., 10 բն.
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	"Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ" ՓԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/h 220310120898000
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ՝ 00089023
Գլխավոր տնօրեն՝	Տնօրեն՝
---------- Հ. Հարությունյան	---------- Ս. Թամազյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«27» 12 2021թ. կնքված
«ԲԷՏ-ԳՀՇՁԲ-22/01» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	90911110/502	**Շենքերի մաքրման ծառայություններ**	**Կատարողը պարտավոր է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից զբաղեցվող տարածքներում՝** 1. Վարչական շենք՝ 2484քմ (ընդհանուր տարածքը՝ 2,0919հա), 3 հարկ, աշխատասենյակ 71 հատ, սանհանգույց 8 հատ, ընդհանուր օգտագործման տարածք (միջանցք՝ ընդհանուրը՝ 175 մետր երկարությամբ), պահեստային տարածք 2 հատ (40մ² և 60մ²), պահակակետ 2 հատ, խոհանոց 2 հատ, նիստերի դահլիճ 1 հատ, ծխարան 1 հատ, աստիճանավանդակ և այլն (հասցեն՝ ք.Երևան Ջորավար Անդրանիկի 1): 2. Վարչական շենք (նոր մասնաշենք)- 864քմ, 1 հարկ, աշխատասենյակ՝ 34 հատ, սանհանգույցներ՝ 8 հատ, ընդհանուր օգտագործման տարածք (միջանցք)՝ 4 հատ ընդհանուրը՝ 182 մետր երկարությամբ, հասցեն՝ ք.Երևան Ջորավար Անդրանիկի 1: 3. Շահումյան ենթակայան (հասցեն՝ ք. Երևան Տիչինայի 207)՝ շինության տարածքը՝ 491,4քմ, ընդհանուր տարածքը՝ 5,0318հա: 4. Մարաշ ենթակայան (հասցեն՝ ք. Երևան Նոր նորք 9-րդ միկրոշրջան)՝ շինության տարածքը՝ 490,2քմ, ընդհանուր տարածքը՝ 3,31132հա: 5. Զովունի ենթակայան (հասցեն՝ ք. Երևան Դավիթաշեն 4-րդ թաղ. Եղվարդի խճուղի 22/3)՝ շինության տարածք՝ 384,9քմ, ընդհանուր տարածքը՝ 3,154հա: 6. Հաղթանակ ենթակայան (հասցեն՝ ք. Երևան Ռաֆֆու 111/7)՝ շինության տարածք՝ 324,5քմ, ընդհանուր տարածքը 2,7559հա: **Իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները**	դրամ	17 580 000	1	Ք.Երևան Ջորավար Անդրանիկի 1 Ք. Երևան Տիչինայի 207 Ք. Երևան Դավիթաշեն 4-րդ թաղ. Եղվարդի խճուղի 22/3 Ք. Երևան Ռաֆֆու 111/7 Ք. Երևան Նոր նորք 9-րդ միկրոշրջան	Ծառայությունների մատուցումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի հիման վրա համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:

			ա) Ամենօրյա մաքրման ծառայություններ սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, ներքին ցուցանակների, բռնակների, դռների, պատուհանագոգերի, մանրահատակի, սալիկապատ և լամինատե հատակի մաքրում հատուկ բարձրորակ նյութերով , ինչպես նաև փոշեկուլով: -գրասենյակային կահույքի և պարագաների, տեխնիկայի արտաքին մաքրում, -սանհանգույցների ամենօրյա մաքրում բարձրորակ քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/ ՝ համաձայն պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված և հաստատված մաքրման գրաֆիկի -Սանհամգույցներում օդը թարմացնող՝ բուրող սարքերի տեղադրում և սպասարկում - աղբամանների դատարկում, մաքրում, տոպրակների տեղադրում և շենքից աղբահանության կազմակերպում: - գորգերի փոշեզերծում փոշեկուլով - արտաքին ցուցանակների մաքրում **Շաբաթական մաքրման աշխատանքներ** -Բակային տարածքների մաքրում, առանձին դեպքերում (քամի, անձրև և այլն), տարածքները պետք է մաքրվի ավելի հաճախակի՝ որպեսզի մշտապես ապահովված լինի տարածքի պատշաճ մաքրությունը: **Ամսական կատարվող աշխատանքներ** -ջահերի, լույսերի, օդորակիչների, տեղեկատվական վահանակների մաքրում: **Կիսամյակային աշխատանքներ** - Գորգերի, շերտավարագույրների, վարագույրների, դրոշների լվացում, քիմ. մաքրում և արդուկում (առաջին անգամը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում) Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում մեկ անգամ՝ պատվիրատուի կողմից ներկայացվող գրավոր հայտի հիման վրա հնգօրյա ժամկետում, Վարչական շենքի ճակատային մասերի լվացում: Բոլոր պատուհանները և դռները (ներսի և դրսի կողմից) պետք է մշտապես լինեն մաքուր վիճակում: **Կատարողը պետք է Ընկերության վարչական շենքի և տարածքային ստորաբաժանումների սանհանգույցներում ապահովի հետևյալ** տնտեսական ապրանքների ամենօրյա տեղադրում՝ աշխատողների համար/՝ Հեղուկ օճառ՝ ոչ պակաս 1գ/սմ3 խտությամբ՝ անուշահոտ բույրով					

			Զուգարանի թուղթ՝ երկշերտ զուգարանի թուղթ «ՍոֆադՇ կամ համարժեք Աղբի տոպրակներ աղբամանների համար Ձեռքերը չորացնելու համար նախատեսված դիսպենսերի մեջ տեղադրվող Z-աձև թղթե անձեռոցիկներ: Կատարողը պետք է մաքրման աշխատանքները իրականացնի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև առավոտյան ժամը 08:00, այդ ժամին Տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության բնականոն աշխատանքային գործունեությանը և ենթարկվի ներքին կարգապահական կանոններին: Կատարողը յուրաքանչյուր աշխատանքային օր Ընկերության վարչական շենքում պետք է ապահովի հերթապահություն՝ առնվազն 1 հոգի, 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, իսկ յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանումներում առնվազն 1 հոգի, 4 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-13:00 ընկած ժամանակահատվածում ովքեր կապահովեն ցանկացած պահին տարածքի պատշաճ մաքրված վիճակը, այդ թվում՝ - Ընկերության վարչական շենքում սանհագույցների ժամային գրաֆիկով մաքրում՝ յուրաքանչյուր սանհանգույց աշխատանքային օրվա ընթացքում առնվազն 4 անգամ - սանհագույցներում և աստիճանավանդակներում տեղակայված ծխարաններում կուտակված աղբի տեղափոխում՝ առնվազն 4 անգամ - մուտքերի և նախամուտքերի մաքրում՝ առնվազն 4 անգամ (անձրևային և ձյան եղանակներին՝ յուրաքանչյուր կես ժամը մեկ - մուտքերում ձմռան ընթացքում մերկասառույցների և ձյան մաքրում՝ յուրաքանչյուր երեսուն րոպեում մեկ անգամ - Միջանցքների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մշտապես մաքուր պահելու նպատակով անընդհատ մաքրման ծառայությունների մատուցում այդ տարածքներում, - դահլիճներում խորհրդակցություններից հետո սպասքի հավաքում, լվացում և տարածքի մաքրում, Պահեստային մասի մաքրում՝ առնվազն շաբաթական 1 անգամ Ապահովել աշխատանքները կոորդինացնող՝ ընկերության ներկայացուցչի շուրջօրյա հասանելիություն: Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերը, մաքրման լաթերը և					

			սարքավորումներն ամբողջությամբ պետք է տրամադրվի կատարողի կողմից: Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի համապատասխան համազգեստով՝ կատարողի տարբերանշանով: Կատարողը պետք է Ընկերության վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումներում ծառայությունը մատուցելու համար ունենա առնվազն հետևյալ մաքրող սարքավորումները՝ 1. ավտոմատ լվացող փոշեկուլ, 2. ավտոմատ պրոֆեսիոնալ փոշեկուլներ, նախատեսված համապատասխան տարածքների համար, 3. ավտոմատ հատակ լվացող և փայլեցնող սարք (միջին տարածքների համար), ավտոմատ գորգերի չոր մաքրման սարք:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Գլխավոր տնօրեն՝

---------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սավ-Վաս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 17 փ., 27 շ., 10 բն.
"Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ" ՓԲԸ
Հ/h 220310120898000
ՀՎՀՀ՝ 00089023

Տնօրեն՝

---------- Ս. Թամազյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«27» 12 2021թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/01 ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԳԻՆԸ ԸՍՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Չափաբաժինների համարները	Ծառայության անվանումը	Ծառայության մեկ ամսվա արժեքը /տառերով և թվերով/
1	2	3
1	Վարչական շենք	684700/վեց հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր/
2	Վարչական շենք (նոր մասնաշենք)	198000/հարյուր իննսունութ հազար/
3	Շահումյան ենթակայան	147500/հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր/
4	Մարաշ ենթակայան	147600/հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր/
5	Ջովունի ենթակայան	147600/հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր/
6	Հաղթանակ ենթակայան	139600/հարյուր երեսունինը հազար վեց հարյուր/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Գլխավոր տնօրեն՝
---------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սավ-Վաս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 17 փ., 27 շ., 10 բն.
"Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ" ՓԲԸ
Հ/h 220310120898000
ՀՎՀՀ՝ 00089023

Տնօրեն՝
---------- Ս. Թամազյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«21» 12 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N __ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«24» 12 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով Պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը

գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն